


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որևէ

Պարբերական պատկերազարդում  
ՍՐՇԱՆՈՅ ըստ  
ԳԱՆՐԷ (Եգիպտոս)



ԲԱՍՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՉԱՄՍՐ	
Տարեկան ողջ դասին	60
Վե՛յակետայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան Ձրակ	20
Վե՛յակետայ	12

ԲԱՍՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻ ԳՆԱՆՈՒԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խոնարհութեան վրայ է :

Խոնարհութեան ուղղուած  
գրութիւնք եւ չ'են տրուիր

Ս.ՉԴԱՐՄԱՐԹԻՒԹԻՒՆԸ  
Կախիկ վճարելի են

E. TOROSSIAN  
Dir. propr. du journal arménien  
ARCHELOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՄԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԻՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժն.

Ընդունելու ջերմաստիճանը կը խնդրուի որ բաժնետիրները նախորդ տարիէն մնացեալ պատ. սուղ կցելով որիկը նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեկանի բաժանորդագիրը, եւ հարկ չ'ըրողը մասնաւոր դիմումներու, որով ինք ղոճարարիս մը պիտի ըլլան ՍՐՇԱՆՈՅԻ արդէն բազմազարդ Տնօրինութեան :

ԻՆՆԵՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ



« Ժառանակը փակագիծ մըն է յարիսեակաւնութեան մեջ : »

Ահաւասիկ իննետասներորդ դարը իր վախճանին հասաւ, և քսաներորդ դարուն դռներէն ներս մտած ենք : Մինչ մէկ դարէն միւսը կ'անցնինք՝ անգամ մը ետ դառնալով այս անցած դարուն վրայ ակնարկ մը չ'ենտել չենք կրնար : Այո՛, իննետասներորդ դարը, պատմութեան այն փառաւոր էջը, վերջացաւ և իր բոլոր յաղթական արձանագրութիւններովը իր նախորդներուն խառնուեցաւ : Ինչ մեծ գործեր կատարեց այս հարիւր տարիներուն սահմանափակ ժամանակամիջոցը : Ինչ ազդեցիկ դերեր կատարեց պատմութեան թատերաբեմին վրայ : Ինչ զարմանալի և վրդովիչ փոփոխութիւններ մտցուց աշխարհի դարաւորապէս միօրինակ ընթացքին մէջ : Հոն կը տեսնենք մարդկութեան յառաջդիմութիւնը այն հսկայական քայլերով որ անձանթ էր նախնի դարերուն մէջ : Իննետասներորդ դարը իր գիտական և մեքենական գիտելիքներովը բոլորովին յեղաշրջած է կենցաղավարութեան կերպերը և հեշտացուցած է ապրելու եղանակը : Այսօր եթէ մեր նախնիքները իրենց դարաւոր քունէն արթննալով գլուխնին վեր վերցնեն և իրենց շիրիմներէն դուրս աշխարհի վրայ ակնարկ մը նետեն, պիտի չկարենան ճանչնալ այն երկիրը որ իրենց սեփական բնավայրն էր : Ամեն բան փոխուած է : ամեն բան նոր կերպարանք ստացած է : Բայց քաղաքակրթութիւնը և գիտութիւնը իրենց յատուկ օրհնութիւններուն հետ մեկտեղ արտադրած են այնպիսի պտուղներ որ մարդկութեան անէծքը եղած են : Բարին և չարը համահաւասար յառաջացած են : մինչ բա-

րին մէկ կողմէ մարդկութիւնը շինելու և ազնուացնելու ետեւ եղած է : չարը միւս կողմէ զայն քանդելու վատթարացնելու ճգնած է :  
Ո՞վ կրնայ բաւ թէ այսօր մարդիկ . իրենց բերաւոր գիւտերովը և անհամեմատելի հմտութեամբը աւելի բարի, աւելի ազնիւ, աւելի առաքինի և աւելի երկիւղած են քան նախնի ժամանակներու միջին դարերուն մէջ՝ ապրող անուս, կիսավայրենի և բարբարոս ժողովուրդները : Նոյն կիրքը, նոյն եսամոլութիւնը, նոյն արիւնհարու բնատրութիւնը այսօր գոյութիւն ունի տարբեր երևոյթներու տակ աւելի յղուած և փայլուն գոյներով : Մինչ առաջները կըրից գոհացում տալու համար մարդիկ զիրար մէկիկ մէկիկ կը կոտորէին, այսօր գիտութեան և յառաջդիմութեան շնորհիւ մարդ կարող է իր ընկեր արարածները շարքել տանեակներով և հաշիւներով :  
Իննետասներորդ դարը ինչ ալ ըլլայ ուրիշ ազդերու համար, ինչ օրհնութիւններով ալ զանոնք պսակած ըլլայ, մեզ՝ Հայերուս համար անկիս սեւ դար մըն է : Պիտի չմոռնան մեր յաջորդ սերունդները այն արկածները զորս այս դարը մեր գըլխուն հասցուց : Հազարաւոր շարժումներու ճգնաժամի աղետալ ճիշդը երկար ժամանակ պիտի արձագանգէ քսաներորդ դարուն մինչև վերջերը և մեր տխուր պատմութեան բազմաթիւ սեւ էջերուն վրայ այս սեւագոյն և արիւնտու էջն ալ պիտի աւելնայ : Իննետասներորդ դարը արդարև մեծ գործերու հանդիսատես եղած է . քաղաքական մեծ արտօնութիւններ շնորհած է ժողովուրդին ձեռքը, ազատութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն քարոզած է . սակայն անոր վերջին տասը տարիներու ընթացքը մեզ կը ցուցնէ թէ այս երևոյթները սոսկ արտաքին են և թէ մարդ տակաւին նոյն անագորոյն դիշատիչ անասունն է որ պատեհութիւն գտած ատեն մէկ կողմ կը նետէ Փարիսեցւոյն պատմութեան և մեր կապարանոց կը խոյանայ իր թշնամոյն վրայ : Ո՞ր գիտող անհատ արդէն չէ կրցած գուշակել թէ վերջին մի քանի տարիներուն քաղաքական աշխարհի մէջ անցած դարձածը - Հայկական շարքը, թիւրքահեղին պատերազմը և հարաւային ավերիկէի մէջ տեղի ունեցած արիւնալի ճակատամարտները, ուրիշ բան չեն յայտնար այլ վերսկսումը այն հին պայքարին յորում՝ տկարը գերբնական ճիգեր կ'ընէ ընդդէմ զօրաւորին իր գոյութեանը համար :  
Այսպէս տխրութեամբ կը համակուինք

մենք հայերս, երբ դէպի ետ ակնարկ մը կը նետենք : Իննետասներորդ դարուն մեզի պարզեւած օրհնութիւնները . ինչ որ ալ ըլլան, անոնք կը նսեմանան այս վերջին տարիներու « Մահուան շուքի ձորին » մէջ : Մեր գրական և կրթական յառաջդիմութիւնը, որ հազիւ թէ նշմարելի է, և ան ալ ազդին մի խիստ փոքրաթիւ մասին մէջ՝ չ'կրնար փոխարէն մը ըլլալ այն հազարի կորուստներուն որ մենք ունեցանք իբր պղծ : Մայր հողին վրայ տակաւին ընդարձակ դաշտեր կան չ'մշակուած : Մեծ խոշորոտներ կան տակաւին մեր յառաջդիմութեան շաղկին մէջ որ վերնալու են, միտքերը զարգանալու են, սրտերնուն մէջ ազգասիրութեան և եղբայրութեան սերմերը ցանուելու են : մեր ազգային նկարագիրը վերակազմուելու է, ատեւութեանը, ոխը, ետը, տեղի տալու են ընդհանրութեան շահուն առջև, մէկ խօսքով ազգային կեանք ըստած բառին բուն իմաստը հասկցուելու է : Ասոնք են այն կարգ մը դժուարութիւնները զորս յաղթելու համար քիչ աշխատութիւն և ջանք չ'պահանջուիր :

ԱՅԳՈՒՆ

Միւսկոյնին ձայնը այգո՛ւն,  
Երազե՛լ տայ հոգւոյս թախծին...  
Երբ պատուհանը առանձին՝  
Աստղերուն պէս հակեմ անքուն... :

Խորհրդաւոր այն լուս պահուն,  
Ձերք ծըրքիդ ձայնն երկրածին,  
Միւսկոյնին ձայնը այգո՛ւն,  
Երազե՛լ տայ հոգւոյս թախծին... :

Գիշերին մէ՛ջ, արտօնուազին,  
Երբ զարթնում գերք Սաղմոսերուն,  
Աղօթելու Անհո՛ւն էին,  
Հառաչ մ' իւրէ՛ սըրտէս նըկու՛ն,  
Միւսկոյնին ձայնը այգո՛ւն :  
ՉԳՁԻԿ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇԵՆ

Մինչդեռ անդին Անգլիոյ մէջ Թագուհին դուցէ՛ Պօէրներու և լքուած Հայերու անէծքներով և հազարաւոր մեռեալներու, այրիներու և որբերու ուրուականներէն հալածուած հոգեվարք է և թերևս այս տողերը գրուած պահուն գաղթած է ապրելէ, անդին Բարեյուսոյ գաղութը արիւնհրակի մէջ է : Պօէր գոմմանտները ճանճերու նման ամէն կողմ կը վխտան, սարսափի

մէջ ձգելով Գարի անգլիական կառավարութիւնը : Պաշարման վիճակը արդէն հրատարակուած է բոլոր Գարի գաղթականներին մէջ և գիշեր ցերեկ անգլիացիք զօրածոյով կ'ընեն արշաւորներուն յառաջադասութիւնը կասեցնելու կարող զօրաբանակներ կազմելու համար, բայց բոլոր հաւաքուած նորեկ զօրքերը կուտ մը իսկ չեն արժեր Պօէրնբուրն առջև :

Տը Ուէթը որ բոլոր այս անյուսալի և աներևակայելի փորձանքները բերու անգլիացիներու գլխին — և կամ մամիկիս մէկ արտայայտութիւնը գործածելու համար, այս րիսիկները դրաւ անգլիացւոց գլխին — չբաւականանալով Գարը, Օրանտը լաւ մը տակնուվրայ ընելէ ու խառնշուկելէ, այսօր կ'ուզէ նախալի մէջ գլորել երկպառակութեան խնձորը . երկուսն հեռագիրը կ'ըսէ թէ՛ Տը Ուէթը կը պատրաստուի նախալ արշաւել :

Տարօրինակ մարդ մըն է Տը Ուէթը . Թրանսլալի, Օրանտի, Գարի բոլոր ծակուծուկը գիտէ և այնպէս մը լաւ ուսումնասիրած է իրեն դէմ զրկուող բոլոր անգլիացի զօրավարները՝ որ ամենուն արժէքն ու կարողութիւնը գիտէ և ըստ այնմ կը շարժի . իրեն 250000 Ֆրանք խօստացան անգլիացիները՝ եթէ պատերազմէն հրաժարէր . բայց արհամարանօք պատասխանեց թէ՛ « զինուոր մը չծախուի և այդպիսի առաջարկի մը ընդունելը անգլիացի զօրականի մը վայել է, » եթէ քիչ մը մտածենք՝ պիտի տեսնենք թէ սա Թրանսլալի պատերազմը եթէ չ'ծաղէր, մութ և աննշան մարդ մը պիտի մնար այդ Ամբիկէի Պօնաբարթը՝ որ այժմ կը դողացնէ անգլիական կառավարութիւնը :

Վերջերս լրագրեր մը տեսակցած է Տիւկին Տը Ուէթի հետ որ սապէս ըսած է .

« Պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր ամուսինս մէկ անգամ մը տեսած եմ, տուններնիս և ազարակներնիս այրեցին, կործանեցին, անգլիացիները տավարներնիս գողցան և ես 7 զաւակներովս մէկ տեղէ ուրիշ տեղ մը քաշկրտուեցայ, ո՛չ հագուստ ունինք և ո՛չ կօշիկ, հիմակուան բնակած տուններնիս բարեկամներնուս ըրած շնորհքին կը պարտինք :

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

**ԺՈՒԼ ՊԼԱՐՔԻ (3)**

**ՍՈՎԱՐԷԹԸ**

(Շարժ . մտաւոր քիւն)

Միայն Արագուիի հետ ունեցած գաղտնի տեսակցութեանցը եւ կամ ծերուկին առջև ունեցած խնամակցութեանցը մէջ, Բէքա չէր պահէր այն զգացումը որ երկու արարածներ իրար կը կապէ մինչեւ մահ : Ժուանի նոյն իսկ երգուած էր — իր մեռած մօրը պատարագի գրքին վրայ — որ իրմէն գտաւ ուրիշի մը չ'պիտի ըլլար : Երկնային աստղի մը պէս գեղեցիկ աղջկան մը այսպէս մէկ երգումը, բուսական էր Ժուանի նման արկածախնդիր եւ յանդուգն երիտասարդ մը ապահովցնելու, անոր սիրտ տալու : « Է՛ն ուրեմն — ըսաւ նա ինքնիքն — սա երկու հագար առբուն պիտի ունենամ, չեմ գիտեր ինչպէս, բայց վերջապէս պիտի ունենամ : »

Եւ ի՛նչ ծրարները մտքէն անցուց, ի՛նչ պէս աշխատեցաւ . . . ո՛րչափ ինքզինքը կերաւ այդ այսյամանադրեալ գումարը գանալու . . .

Օր մը Սէն Սէպասթիէնի մէջ, գնդակազի ժամանակ քիչ մնաց որ գլուխը պատէ պատ գար-

« Ինչ որ ալ ընեն անգլիացիները՝ մեզ կանանցս դէմ՝ մենք երբէք չ'պիտի խրատենք մերիններուն անձնատուր ըլլալու եթէ բոլորն ալ մեռնելու ըլլան : Հիմա ո՛չ տուն ունինք ո՛չ տեղ, արդէն կործանած ենք և մինչև մեր վերջին հառաջը կ'ուզենք պատերազմել մեր հայրենիքին համար :

« Չաւակներէս երկուքը իրենց հօրը ձեռքին տակ կը կուռին մէկն ալ Ս . Հեղինէի մէջ գերի է : »

Այսպէս կը խօսի Տը Ուէթին կինը, այն Տը Ուէթին որ փառաւոր անուններ ժառանգեց, իր հիացողները զայն կ'անուանեն le général insaisissable, l'introuvable, իսկ թշնամիները Ubiquitous որ ճիշտ Տը Ուէթը յատկանշող բառն է, այսինքն « միևնոյն ժամանակին ամեն տեղ գտնուող » :

Փերմանացի կամաւոր մը որ Պօէրնբուրն հետ անգլիացիներուն դէմ կուռած է նամակի մը մէջ Պօէրնբուրն մղած հայդուկային կուռն վրայ (guerre de guerrillas) գաղափար մը կուտայ :

« Լորտ Ռօպէրթսի յայտարարութիւնները և Պօթաի կապակերպիչի տաղանդը Պօէրնբուրն դարձուցած են՝ այն ինչ որ առաջ չէին, այսինքն կատարեալ զինուորներ : Պատերազմը պիտի տևէ այնչափ, որչափ որ Անգլիացի գանուի հոն : Այս մարտ ամառն — Հարա-Ամբիկէի ձմրան սկզբնաւորութիւնը — Պօէրնբուրն նորէն Թրանսլալի հիւսիսակողմը Պիւլլէլտի մէջերը պիտի աներևութանան, ուրտեղ միշտ արօտավայրեր կրնան գտնել . և Հոկտեմբերին դարձեալ Հարաւ պիտի իջնան :

« Պօէրնբուրն համար պատերազմը հիմա մարմնամարզ մը (sport) դարձած է, անկարելի է աննց գլուխը խօթել թէ՛ Անգլիացւոց դէմ պատերազմը, ընդհանուր դանդաղածակուն շարք մը պէտք է ըլլայ, Պօէրը Անգլիացին իրեն որսը կը նկատէ, և պարագային համար կը պահէ . միայն ամենէն կատաղիներն են որ ճիշդ գլխու նշան կ'առնեն . միւսները սովորաբար կուռծքէ կը զարնեն . վա՛յ Անգլիացիներուն, եթէ Պօէրնբուրն Անգլիացի սպաննելու կատաղութենէն բռնուին :

Ներով Ղախախէր մէկ թիւի համար, Թօլօգայի ախոյեանին դէմ բռնուած ամբողջ գրաւը կորսնցուցած էր : Խաղաղաւը կորեկ գումար մըն էր, եւ մէկ թիւի մը համար . . . մէկ անիծեալ թիւի մը համար . . . Արագուի յաղթուած էր, Հեռնանիցիներն ալ իրեն հետ . խեղճ մարդը մաղբը կը փետտէր, ճակատը կը հարուածէր, բարկութենէն գրեթէ խելայեղած էր . . .

Եւ այդ 2000 տուրօն իրեն պէտք էր, եւ ամեն անգամ կը կրկնէր Բէքաին ըստը :

« Եթէ քուզ չ'ըլլամ, ուրիշ մարդու չը պիտի պատկանիմ, Արագուի . բայց հօրս կենդանութեանը իրեն պիտի հնազանդիմ եւ իր մեռնելէն յետոյ ալ իրեն կամքը պիտի յարգեմ : »

Խեղճ Արագուի մտածեց ճամբորդել . մե՛ծ ճամբորդութիւն մը ընել . իրեն կ'ըսէին թէ՛ անպին Ամբիկա, Լա Բլաթաի մէջ Վասկօն գաղթականները երբեմն հարստութիւն կը հաւաքէին : Այո՛, պարո՛նս, կ'երեւայ թէ՛ մեր գընդախող խաղաղողները, Պուէնօս-Այրէսի մէջ անվաճառ թիւերս կը ժողուին : Սէն Սէպասթիէն գառնալնուղ ալ կողմերնիք սերուն տուն մը պիտի տեսնէք . այդ տունը Հեռնանիցի մարդու մըն է, որ Նոր-Ալչարսին մէջ մեծ հարստութիւն գիղած է :

Եթէ Բէքան նոյն իսկ հեռուէն տեսնելու փափաքը — պատարագին ժամանակ, իրիկուան ժամերգութեան ատեն, ցլարչաներու եւ կամ

« Հարիւր փառիւղչոյի վրայ միջին հաշուով 80ը իրենց տեղը կը հասնին : Գալով համապետին, Պօէրնբուր սովորաբար խափի կը հագնին, ան ալ Անգլիացիներէն կը կուռուտեն, ապա թէ ոչ ուղաճնուն պէս կըրնան հագուիլ : Պօէր մը տեսայ որ Տընտի մէջ իր թալլած երկնային հագուստը կը պատերազմէր :

« Իսկ թշնամիները, Պօէրնբուրը թաղուած են, հիմակուան գործածածնին Անգլիացիներէն առնուածներն են . այն Անգլիացի զօրավարները՝ որք կը պարծենան թէ՛ Պօէրնբուրն թշնամիներ առած են, իրենց մնալը ետ առած են :

Մէկ բառով այսօր Պօէրնբուր բացարձակապէս Անգլիացւոց ծախքով կ'ապրին և կը պատերազմին :

Վերջերս Մարտէյլ հասնող Հոլանտացի երեւելիները սապէս կը բացատրեն Պօէրնբուրն յատակադիժը : Օրանտեան Պօէրնբուր Տը Ուէթի և Տը Լարէյի հրամանատարութեամբ հաղորդակցութեան գիծեր պիտի կտրեն և խափանեն . հարաւէն եկող պաշարի փոխադրութեան գործողութիւնները պիտի անդամալուծեն . մինչդեռ անդին Պօթա պիտի ջանայ հիւսիսի անգլիական բազմաթիւ բանակները անշարժութեան դատապարտել և միևնոյն ժամանակ Լօրէնս-Մարքէլի գծին երկայնքը ճիշտ Տը Ուէթի ըրած զինուորական գործողութիւնները կրկնել :

Լիյաէնպուրկի մէջ որ անմատչելի երկիր մըն է, երկու հասարակապետութիւնները պահեստի անհատնում պոչար և ռազմամթերք ունին :

Այսպիսի պայմաններու մէջ պատերազմը ո՛րչափ կրնայ երկարել դեռ :

Ձենք կաշու ճշտապէս պատասխանել . բայց սա չափը պէտք է յիշատակել որ լաւ կազմակերպեալ հայդուկային պատերազմները կը ոչնչացնեն անողին բանակները . վրայ նախօրէժի Սպանիոյ պատերազմը . ուրուն մէջ մեծ աշխարհակալը 300,000 հոգի կորսնցուց և այդ Ֆրանսացի զօրքերը ամբողջ եւրոպան ստնակոխ ընող տիտաններն էին, որոնց զօրավարները, Միւռա, Վիքթօր, Լան, Միւշէ, Ժիւնօ կը կոչուէին և ո՛չ թէ Մէթհուէն, Կաթար, Գօլլիլ, Պուլլըր . Թրանսպիները ամեն կարգաւորեալ պատերազմներու մէջ Ղախախէրին Սպանիացւոց . բայց Սպանիացիք ալ գիշեր ցերեկ իրենց մղած հայդուկային կռիւներով մաշեցուցին ֆրանսական ահաւոր Մեծ բանա-

ագարակին առջևէն անցած պահուն պատուհանէն տեսնելու գաղափարը խելքը չ'թոցուներ, Ժուան Արագուիլ հաւանականաբար կը մեկնէր . այո՛, մեկնած կ'ըլլար եւ հոն որսորդութիւն, ոսկեքաղութիւն և կամ ըստ բաղքի ո՛ր եւ բանով մը զրաղելով՝ երբ փնտրէր, ինչպէս որ ըսած էր Հայր Ծէկարէյ, աւելի աղէկ կ'ընէր :

Այն ատեններն է որ պատերազմը կը ծագի . վերջին պատերազմը՝ որ կը հրդեհէ մեր երկիրը եւ ինչպէս որ պատմեցի, Պիլպաօի առջևը կ'երթայ եւ յուսահատ կարբիտօ զօրավարին առջևը կը տնկուի, երկու բառով իր պատմութիւնը կ'ընէ զօրավարին եւ մինչդեռ Գարլոտեաններէն յաղթուած Մարքի հին զինուորը յօնքերը կը պատէ, Ժուան կ'աւեցնէ .

— « Եթէ Մուքարակայի կեանքը, ինչպէս որ կ'ըսէք, հարստութիւն մը կ'արժէ, պիտի ունենամ զօրավարը իմ :

— Մուքարակայի կեանքը հարստութիւնէ մը աւելի կ'արժէ, պատասխանեց կարբիտօ, իմ խեղճ զաւակներուս հազարաւորներուն կեանքը կ'արժէ : Մուքարակայնի զինուորութեան մարմնացումն է . Պիլպաօի բանակին է, մշտնջենական ջարդն է . ամեն բան է : Գեղի տալիք հրամաններ չ'ունիմ . դուն զինուոր չես, բայց եթէ ինձի ըսածը կատարես, խօսաացածս յիշեցուր ինձի :

— Լաւ, ց'տեսութիւնը զօրավար — ըսաւ, Ժուան,

կը և Ապանիան նարոլէօնի փառքին գե-  
րեզմանը եղաւ :

Մեծ դիւանագէտ մըն ալ ըսած է թէ՛  
« Հարաւային Ափրիկէ անպիտանաց գերեզ-  
մանը պիտի ըլլայ »

**Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր**

4. Պոլիս 19 Յունուար .- Օսմանեան կա-  
ռավարութիւնը հրամայած է 3 զօրագունդեր  
Վիթոլիայէն Ալպանիա զրկել վերջին խռովու-  
թեանց համար : Մեծ Վէզիրին հրամանովը Ալ-  
պանիոյ եւ Հայաստանի կառավարիչները պար-  
տին ներկայ կացութեան վրայ մանրամասն  
տեղեկագիրներ հաղորդել :

4. Պոլիս 20 Յունուար .- Հայաստանի մէջ  
չստ ծանր կորուստներ տեղի ունեցած են այս վեր-  
ջին օրերս : Ամէն տեղի զէնք եւ ռազմամթերք  
բռնուած է, բազմաթիւ ձերբակալութիւններ  
կատարուած են :

Լոնտոն 20 Յունուար .- Զօրավար Տը Ուէթ  
կը պատրաստուի նախալ արշաւել :

Պլեօմֆօնթայն 20 Յունուար .- Պուրիւր-  
ներու խաղաղութեան յանձնարարութիւնը ներկա-  
յացուցիչներ զրկած է Օրանտի Պօէրներուն .  
ասոնք մերժած են Անգլիական պայմանները ըն-  
դունիլ :

Բրէթորիա 19 Յունուար .- Պօէրները Պալ-  
մօրալի մօտը կառախուժք մը բռնած են որ  
հանքերու համար շինուածանութիւնը կը պարու-  
նակէր : Պօէրները բոլոր ճամբորդները կողոպ-  
տած են :

Լոնտոն 19 Յունուար .- Պաշարման վի-  
ճակը հրատարակուած է ամբողջ Գաբի գաղթա-  
կանութեան մէջ :

Լոնտոն 20 Յունուար .- Վիզթօրիա թա-  
զուհին մահամերձ է, կը կարծուի թէ վաղը  
(երկուշաբթի) չ'անցընէր :

Օզպօրն 22 Յունուար .- Թագուհին այս  
առաւօտ ժամը 6ը 45 անցած մտաւ, ուղեղային  
արիւնահոսութիւնով խոռոնուած կիսանդամա-  
լուծութեան մը ( hémiplégie ) :

**ԿԻՉԷԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ**

Փարիզի համալսարանայինը չէ . մասնակի  
ցուցահանդէս մ'է սա , որ վաղը Կիզէի Հողա-  
գործական պարտիզին մէջ տեղի պիտի ունենայ .  
ուրեմի Գահիրէի ցուցահանդէսը անուանենք  
զայն եւ պատշաճութիւնն ալ այդպէս կը պա-  
հանջէ արդէն :

Տունկերու , բոյսերու եւ արուեստական  
նորանոր հրաշալիքներու հանդիսատես պիտի  
ըլլան վաղուան այցելուները , որոնք թուով

Մեր Կարբիտօն ուսերը թոթուած էր եւ  
վայրկեան մը ինքզինքին հարցուցած էր թէ՛  
արդեօք այդ մարդը արկածախնդիր խենդին մէ-  
կը չ'էր :

Արագուիլ սակայն , միայն մէկ բան կը  
մտածէր . Մուքարրակայի կեանքը իրեն համար  
հարստութիւն մը կ'արժէր , այդչափի հարստու-  
թիւն մը , որուն ատեն մը հոսմ սոխի չափ կա-  
րեւորութիւն չէր ստար , հիմա կ'ուզէր ունենալ  
որովհետեւ այդ գուժարով միայն պիտի կարե-  
նար Բէքան ստանալ : Ուրեմի Հեռանիէն հեռա-  
նալով աներեւոյթ եղաւ , Բաւական ժամանակ  
վրան չխօսուեցաւ . զօրավարը ինքնիրեն կ'ըսէր  
թէ՛ խենդի մը հետ գործ ունեցած էր եւ պատ-  
րաստութիւններ կը տեսնար գիշերային յար-  
ձակում մը կատարելով Մուքարրակայն յանկար-  
ծակի բերել , եւ հրացանի հարուածներու լոյ-  
սով խաւարակուտ կիրճը ձեղքել , զէպի Պիլպօս  
ճամբայ մը բանալու համար :

Այս պահուն Արագուիլ , դանակը գրպանը  
— պատուական դանակ կը՝ զոր կընտրի ի հարկին  
գնդակի կը պէս նետել եւ հետուէն թիրախին  
( cible ) մէջ ցցել — Գարրոսեան պատնէջներուն  
շուրջը կը թափառէր :

Շատ գիշերներ ըստ բաղդի բացօդեայ պատ-  
կելով կ'ապաստէր Մուքարրակայի մօտեանալու  
վայրկեանին , յորում պիտի կարողանար ծե ,  
Կարբիտօն ազատել անկէ : Այդ հայգրակապետի  
կեանքը իրեն ինչ կ'ընէր որ . « Թնդանօթի պա-

Ամբողջ Անգրիա խոր սուգով համակուած է  
քիչ չ'պիտի ըլլան , գիտե՛նք : Աշխարհի ամե-  
նէն շատ հեռաքրքիրները եղիպոսոս կը վաղեն  
արդէն եւ իրենց այս արշաւանքը արդարաց-  
նելու շատ մը պատճառներ ունին , Ամենէն  
հին . պատմական ամենէն շատ առաւելութիւն-  
ներով օժտուած բազմաակալ իրերու եւ ռազմա-  
կաներու հանգիստես պիտի ըլլան :

Հնութիւններու վրայ խօսելով սակայն ,  
չ'մոռնանք նոյալինկէրի աշխարհաճոչակ տունը ,  
որ վաղուան ցուցահանդէսին մէջ իր մասնաւոր  
տեղը ունի , յորում ցուցադրած է 29 հատ ըն-  
տիր մեքենաներ , որոնք Սինկիէրի գործարանին  
հրաշալիքներն են , եւ ելեքարականութեան ու-  
ժով իրենքերենց շատ մը ընտիր գործեր կը  
պատրաստեն , այնպէս որ ձեռագործի ամենէն  
չստ հմուտ արկնանց անգամ զարմանքը պիտի  
չարժեն :

Անա եգիպտական հնութիւններու քով նո-  
րութիւններ , որոնք առաւել եւս հեռաքրքրա-  
կան պիտի ըլլան քան զմտուած մարմին մը ,  
եւ քան եգիպտացուց հին աստուածներն , ու-  
րոցմով լիքն է հնութեանց թանգարանը :

Տեսած էք 12 ասեղներով բանող ինքնա-  
շարժ մեքենայ մը , որ հրաշալի կերպով պատ-  
րաստէ հագուստի վերաբերեալ ամեն տեսակ պի-  
տոյքներ :

Գարձեալ կրնա՞ք երեւակայել մեքենաներ՝  
որոնք կօշկակարի մը աշխատութիւնները կիսով  
չափ թեթեւցնելու ծառայեն , առանց մարդու  
օժանդակութեան :

Տեսած էք դարձեալ ձեզի համար ճամբորդի  
պայուսակներ պատրաստող մեքենաներ , որոնք  
Ձեր պայուսակները հիննալու ժամանակ , նորու-  
ղելու պատրաստականութիւնին ալ յայտնեն :

Տեսած էք ամեն կերպաներու վրայ առ  
հասարակ աշխատելու արամադութիւն ցոյց  
տուող մեքենաներ :

Ուրեմի վաղը պէտք է կրթով Հողագործա-  
կան պարտիզն եւ զարմանալ այն ճարտար շին-  
ուածներուն վրայ , որոնք Սինկիէրի մեքենա-  
ները կը պատրաստեն ելեքարականութեան օ-  
ժանդակութեամբ . հոն պիտի տեսնէք կօշիկ-  
ներ , ֆօսֆօրներ , բանուած թափիկներ , պո-  
սթրիներ եւ քիչի վրայ ամենաբարձր բանուած-  
ներ , որոնց վրայ նայելով պիտի հիանան անշուշտ  
ամեն անոնք , որոնք կը կարծեն թէ իրենց  
ձեռքերը ճարտարութեսա են :

Է՛հ , աշխարհը քեզ կը դառնայ կ'ըսեն .  
ո՞վ կը յուսար թէ՛ օր մը երկաթն ալ մըրցում  
պիտի առաջարկէ այն փափուկ ձեռքերուն ,  
որոնց համար Գոնիթ մը իր ամբողջ հարստու-  
թիւնը պիտի զոհէր , իսկ աղքատ ու ազնիւ ե-  
րիտասարդ մը իր կեանքը . . . :

տերազմ , դանակի կռիւ , միշտ պատերազմ է .  
երբ որ մարդ իր անձը կը զոհէ , իրաւունք ու-  
նի սպաննելու » կ'ըսէր , եւ այս պատճառաբա-  
նութիւններով մեր Արագուիլը յարմար առի-  
թին կ'սպասէր :

Գիշեր մը՝ այն կիսաւեր ագարակին , որուն  
փլատակներուն մէջ Մուքարրակայ կը քնանար ,  
այնչափ մօտեցաւ , որ պահակի մը գնդակը Ա-  
րագուիլի գլխուն քովէն սուրեց եւ այնչափ  
մօտէն անցաւ , որ ձախ ականջէն մտտ մը տա-  
րաւ :

Բայց Արագուիլ երբէք հոգը չ'ըրաւ . մի-  
այն բանի մը ցաւեցաւ , այն էր թէ՛ Գարրոս-  
եան պահակը զինքը նշմարած էր եւ դա արգելք  
մը եղած էր , պատին միւս կողմը անցնելով՝  
Մուքարրակայի պտակած տեղը ցատկելու . . . :

Ո՞չ գարձեալ սկսել հարկ պիտի ըլլայ ,  
կ'ըսէր :

Է՛հ , հոգ չէր . հետեւեալ օրը գարձեալ պի-  
տի սկսէր . հետեւեալ օրը ճիշտ Կարբիտօնի գի-  
շերային յարձակման համար որոշեալ գիշերն էր ,  
ժուան Արագուիլ փոսի մը մէջ պառկած էր , իր  
որջին մէջ կծկտած գազանի մը պէս եւ որոշած  
էր այս անգամ ինչ որ ալ լինէր , Մուքարրա-  
կային մօտեանալ ճիշտ տոյն ժամուն՝ որ ծեր Կար-  
բիտօն Գարրոսեաններուն վրայ յարձակող դուռը  
մը յաւալ մղէր : Պատերազմի սկզբնաւորութեան  
( Շարունակելի )

Գահիրէի Հայոց Արասարաց ընկերու-  
թեան Պատ . Գործ . Ժողովն , Արաբկիրի  
Առաջնորդարանէն ստացած պաշտօնական  
նամակէն քաղելով հետեւեալը , զրկած է  
մեզ ի հրատարակութիւն , ներփակելով  
նաեւ ընկերութեան պաշտպանեալ տասը  
ոչրոց կենսագրական ցանկը .

ՈՐՐԱՍԻՐԱՑ ԸՆԿ . ՀԱՅՈՑ  
Դիւան Գործ . Ժողովն )  
Թիւ 133/89 Գահիրէ : 21 Յուն . 1901

... Տնօրինութիւն «Արշալոյս»

ազգոգուտ լրագրի  
ի քաղաքիս

Հաճեցէք Ձեր ազգոգուտ թերթի մէջ հիւ-  
ընկալել հետեւեալ նամակը եւ անոր յարակից  
ընկերութեան պաշտպանեալ տասը որբերու ան-  
ուանց ցանկը՝ որ զրկուած է մեզ Արաբկիրի Ա-  
ռաջնորդ Գեր . Մուշեղ Մ . Վարդապետ Սե-  
րովբեանէ :

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
Յ'Արաբկիր Արաբկ . 5 Դեկտ . 1900

Համար 269/72

Մեծապատիւ Տիրաբ անդամք  
Որբասիրաց ԸՆԿ . Գործ . Ժողովոյ  
ի Գահիրէ

Մեծապատիւ սիրելիք

Ստացած ենք Ձեր Հոկտ . 4 թիւ եւ 100/63  
համար պաշտօնագրին հետ նաեւ 12520 թիւ 30  
Օսմ . լիբրայի Քրէտի Լիոնէի չէքը , զոր զրկած  
էիք ի հաշիւ Ձեր պաշտպանած 10 որբերու Ա .  
վեցամսէին : Սոյն չէքի արժէքը գահիկով ան-  
ցուցիինք ի հաշիւ , ըստ Ձեր յանձնարարու-  
թեան :

Ներփակ պիտի գտնէք համառօտ կենսագ-  
րութիւնը այն տասը որբերուն , որոնց պաշտ-  
պանութիւնը յանձն առած է Պատուարժան ըն-  
կերութիւնը : Աւելորդ է ըսել , թէ այդ որբերը  
ընտրուած են ամենայն անապատութեամբ , եւ  
որոնք կը պատկանին քաղաքիս ամենէն չքա-  
ւոր դասակարգի ընտանեաց :

Ձեր բաղձանաց համաձայն անոնցմէ մէկ  
հատը ընդունուած է Հայ Հոգովմեական հասա-  
րակութեանէն եւ երկու հատն ալ Բողոքական  
հասարակութեանէն եւ անոնց ընտրութիւնը կա-  
տարած է նոյն հասարակութեան ժողովը մեր  
յանձնարարութեամբ : Այդ երկու որբերը ժողո-  
վարան պիտի յաճախեն այն օրերը , երբ մե-  
րինները եկեղեցի կը տարուին :

Ընկերութեանը նպատակը ի գործ դրած  
ըլլալու համար Հոգաբարձութիւնս որոշած էր  
մնացեալ 7 որբերէն 3ը ընտրել թեմական գիւ-  
ղերէ , սակայն մեր հրաւերին միայն Անջղդի  
գիւղը պատասխանած եւ որբ մը զրկած լինե-  
լով , մնացեալ վեցը ընտրեցինք քաղաքէս .  
անա այս պատճառաւ քիչ մը ուշացաւ մեր նա-  
մակի առաքումը :

Այդ տասը որբերը յանուն Որբասիրաց  
Ընկերութեանը Որբանոց ընդունուեցան տար-  
ւայս Դեկտ . 1էն , հետեւաբար անոնց ծախուց  
տարեշրջանը պիտի սկսի եւ պիտի վերջանայ  
նոյն հաշուով :

Յարմար ատեն մը անձամբ պատրաստելով  
անոնց լուսանկարները պիտի զրկենք Ձեզ :

Մնամք յարգանք  
Հոգաբարձութիւն Հայ Որբանոցին Արաբկիրու  
Նախագահ

Մուշեղ Վարդապետ  
Անդամք

Մարտիրոս Այճեան Գրիգոր Եկաւեան

Մկրտիչ Սուլթանեան

Ի դիմաց Գործ . Ժողովոյ Որբասիրաց  
Ընկերութեան Հայոց Գահիրէի

Վ . Ատենադպրի Ատենապետ  
Կ . ԵՐՁՆԿԱՑԵԱՆ Ա . ՊԵՐՊԵՐՅԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆՏՐԵԱԿ ՏԱՍԸ  
ՈՐԲԵՐՈՒՆ

1. Աւէսիւ-Միւսս Եսայեան , Թաղ Շահ-  
րոզ .- Հայրը Միւսս՝ զէպքին սպաննուած՝ 30  
տարեկան հասակին մէջ . մայրը Սրմայր մե-

առ 25 տարիքին մէջ : Աւետիս ծնած է 1891ին, մկրտուած Ս. Լուսաւորիչ եկեղեցին, ձեռամբ Տէր Թուսիկ Բանանայի :

2. Թորոս-Սարգիս Սուլայեան, Թաղ Եկաւեան .- Հայրը Սարգիս եւ մայրը Մարիամ մէկ տարի առաջ մեռած են : Թորոս ծնած է 1890ին, մկրտուած ի մայր եկեղեցւոյ Ս. Աստուածածնայ, ձեռամբ Տ. Գառնիկ Բանանայի :

3. Մանաս-Սարգիս Դաւիթեան, Թաղ Պասւնահիթեր .- Հայրը Սարգիս զէպարին սպաննուած 35 տարիքին մէջ, մայրը ողջ, ունի արու եւ էգ երկու անչափահաս որբեր : Մանաս ծնած է 1890ին եւ մկրտուած Ս. Աստուածածնայ եկեղեցին, ձեռամբ Տ. Մկրտիչ Բանանայի :

4. Կարապետ-Մանաս Պերպիտեան, Թաղ Տերպիտեր .- Հայրը հիւանդութեամբ 4 տարի առաջ մեռած, մայրը Ովսաննա ողջ : Կարապետ ծնած է 1891ին, մկրտուած Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Տ. Վաղարշայի Բանանայի :

5. Նշան-Մանաս Սուլայեան (Հոռեկեան չայ.) Թաղ Հանկեսեան .- Հայրը 8 տարի առաջ ժամատախտէն մեռած, մայրը Հանի Կիւլ ողջ 40 տարեկան, ունի 2 անչափահաս զուակներ, Նշան ծնած է 1888 ին, մկրտուած ի մայր եկեղեցւոյ, ձեռամբ Տէր Եղնիկ Բանանայ Պաւլուսոյ :

6. Առաքել-Միսայեան, Թաղ Տերպիտեր .- Առաքել մկրտուած է Ս. Աստուածածնայ եկեղեցին, բարեպաշտուէի ոմն որդեկրած է . իր պաշտպան այրի կինը այլեւ այդ որբը պահելու անկարող վիճակին մասնուած ըլլալով՝ Որբանոց ընդունուած է Հոգաբարձութեան որոշմամբ : Առաքել 11 տարեկան է :

7. Արեւի-Արեւիս Գեորգիեան, Թաղ Պերկեկե (Բողոքական) .- Հայրը մեռած, մայրը Պիւլպիւլ ողջ, ունի 2 արու եւ 4 էգ որբեր : Արեւիս ծնած է 1889ին ի Մամա-Խաթուն, (գիւղաքաղաք Երզնկայի) :

8. Ռուբեն-Պորոս Քեչիկեան, Թաղ Պասւնահիթեր (Բողոքական) .- Հայրը զէպարին սպաննուած, մայրը Նազենի ողջ : Ռուբեն ունի իրմէ փոքր եղբայր մը : Ռուբեն ծնած է 1889ին :

9. Պետրոս-Արիստոյի Չիլիկիեան, տեղի ծննդեան եւ բնակութեան՝ Անշրդի (Թեմական գիւղ) : Հայրը զէպարին սպաննուած, մայրը Արուսեակ 22 տարեկան ողջ, ունի փոքր որբ մ'ալ Ստեփան անուն : Պետրոս ծնած է 1892ին, մկրտուած Ս. Նշան եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Տէր Կարապետ Բանանայի եւ կնքահայրութեամբ Արմենակ Գաբրիէլեանի :

10. Յովնանեկ-Գեորգ Գեորգ Մարգարեան, Թաղ Տերպիտեր .- Հայրը զէպարին սպաննուած, մայրը Սրմալը ողջ, ունի չափահաս աղջիկ մը Վարդուէի անուն : Յովնանէս ծնած է 1891ին, մկրտուած ի մայր եկեղեցւոյ, ձեռամբ Տէր Մկրտիչ Բանանայի :

Ստորագրութիւնք  
Հոգար. Հայ Որբանոցին Արարիկերու

**ՀԵՆՆԱՆՎ ԿԻՉԱԿԱՀԱՆՈՎՈՒԿԱՆ**

Կիրակի 20 ՅՈՒՆՈՒԱՐ 1901

7916	2094	6270	3886	6091	659
817	2423	3414	3576	3779	4281
4700	6011	6292	6621	6687	6763
6807	7876	8124	8535	9057	9237
	9465	9476	9619		

**ՀՐԷՆՑ ԲԱՐԵԳՈՐԱԿԱՆ**

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՎՈՒԿԱՆ

Կիրակի 20 ՅՈՒՆՎԱՐ 1901

5144	849	6477	4201	619	624
1392	1514	1518	1659	2218	2672
2860	2940	3034	3134	3682	3798
4133	4184	4296	5120	6099	6559
6650	6936	7049	7896	8021	8920

Տպագրութիւն ԺԻՂՈՒՂԻՍԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ


**Ս Ի Ն Կ Է Ր**  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԱԿՆԿԷՐ

Պատարի փողոց . Իսպանացի սեփականութիւն, Պրիսթլ Օլիվեր ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկէր ներս են եւ ասոնցմէ մինչեւ ցարբ 17,000,000 ծախուած է :

400 Է աւելի վիսյակներով եւ մեքայներով վարձատրուած, երաշխաւորուած մեքենաներ :

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ  
Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԱՐԲՈՒՆԻԲԻՆ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՄԻՆԿԷՐ ի յասկանչիւն :  
ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր եւ նորոգութիւններ, Մինկէր մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ :  
Վճարմանց Դիւրութիւն  
Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

**ՄԱՆԱԲԱՐՉ ՏԻՎԻՆ ՄՈՃԻԿ ԱՉԳԱՊԵՏԵԱՆ**  
Շարա-Ապսխալ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիլէն փոխադրած է Շարա Ապսխալ Ազիզ, Այլ փաշա Շէքիֆի պարտիզին դիմաց, Անմէտ պէյ Ապսխալ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ : Տիվին Սոֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողութեամբ արգէն ծանօթ ըլլալով գահիրէնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն : Վկայեալ ազգայնորեն համար ձրի դարմանում :

**ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒ**

Քանի որ ՄԻՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 Վճի ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչեւ 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և և ք. սիտէ ժամացոյցներ . պատի և քօնսի թուղմազան Բանտի շերտ եւ ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք : Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան ձեռնօղորաֆներու :

**ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ**  
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՈՒՆ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարաժիհները : Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ինպատի իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ այնպէս ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է : Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող բոլոր և է լինկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ : ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յԱզգայնագրեալ